ՔԱՂՎԱԾՔ

Քաղաքացիական գործ թիվ ԵԴ/4396/02/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՌԱՋԻՆ ԱՏՅԱՆԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԱՍՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

Վ Ճ Ի Ռ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ

21.03.2023 թվականի ք. Երևան

Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, նախագահությամբ դատավոր **Մարինա Տաշչյանի** (այսուհետ՝ Դատարան), քննության առնելով քաղաքացիական գործն ըստ հայցի «Ամարաս-Յուս» ՍՊ ընկերության ընդդեմ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲԸ կողմից վերջինիս և «Ամարաս-Յուս» ՍՊ ընկերության միջև 19.08.2020 թվականին կնքված թիվ 02/10 ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20 ծածկագրով պայմանագրի 16.01.2023 թվականի միակողմանի լուծումը և «Ամարաս-Յուս» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 տարի ժամկետով ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջի մասին,

Վ Ճ Ռ Ե Ց

1. «Ամարաս-Յուս» ՍՊ ընկերության հայցն ընդդեմ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲ ընկերության՝ վերջինիս և «Ամարաս-Յուս» ՍՊ ընկերության միջև 19.08.2020 թվականին կնքված թիվ 02/10 ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20 ծածկագրով պայմանագրի 16.01.2023 թվականի միակողմանի լուծումը և «Ամարաս-Յուս» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 տարի ժամկետով ներառելու մասին որոշումն անվավեր ճանաչելու պահանջների մասին, բավարարել ամբողջությամբ.
2. Անվավեր ճանաչել «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲ ընկերության՝ «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲ ընկերության և «Ամարաս-Յուս» ՍՊ ընկերության միջև 19.08.2020 թվականին կնքված թիվ 02/10 ՀԱԷԿ-ԲՄԱՇՁԲ-2-20 ծածկագրով պայմանագրի 16.01.2023 թվականի միակողմանի լուծումը և «Ամարաս-Յուս» ՍՊ ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 տարի ժամկետով ներառելու մասին որոշումը.

3. «Հայկական ատոմային էլեկտրակայան» ՓԲ ընկերությունից հօգուտ «Ամարաս-Յուս» ՍՊ ընկերության բռնագանձել 80000 (ութսուն հազար) ՀՀ դրամ՝ որպես «Ամարաս-Յուս» ՍՊ ընկերության կողմից նախապես վճարված պետական տուրքի գումար:
4. Թիվ ԵԴ/4396/02/23 քաղաքացիական գործով Դատարանի 07.02.2023 թվականի որոշմամբ կիրառված հայցի ապահովման միջոցները պահպանել մինչև վճռի կատարումը:
5. Վճիռը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով պարտապանի հաշվին:
6. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:
7. Վճիռը կարող է բողոքարկվել Հայաստանի Հանրապետության վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման պահից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ ՄԱՐԻՆԱ ՏԱՇՉՅԱՆ